



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ
ՆԲԸՄ-Ի ՆԻՄՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԱՆԴԱՄՍ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ**

Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհատրանքներն ենք բերում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրման 100-ամեայ յոբելեանի առիթով Կենտրոնական Վարչութեան յարգարժան անդամներին, բոլոր բարեգործներին, Միութեան աշխարհասփիռ մասնաճիւղերում ու հասարակութիւններում ներգրաւուած հայորդիներին եւ մեր ժողովրդի բոլոր զաւակներին, ովքեր իրենց կեանքում զգացել են Բարեգործականի խնամքը:

Նարիւրամեակ առաջ հիմնադրուելով մեծ հայրենասէր ու եկեղեցասէր Պօղոս Նուբար Փաշայի ջանքերով՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կոչուեց ծառայելու մեր ժողովրդին աշխարհի բոլոր կողմերում: Մեծագործ բարերարի դրուաբելի օրհնակով յետագայում արժանատր հայորդիներ մեծայարգ Գալուստ Կիլիպենկեան, Ալեքս Մանուկեան, Լուիզ Մանուկեան-Սիմոն ու այլ երախտատրներ, մեր ժողովրդի նոր ձեռքբերումների եւ ազատ կեանքի տեսլականը կրելով իրենց հոգիներում, մեծ բարեգործութիւններով զգալի ներդրում բերեցին ազգային-եկեղեցական մեր կեանքի զարթօնքին: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ազգանպաստ գործունէութեան հարիւր տարիների ընթացքում նրա խանդավառ ու նուիրեալ մշակները հոգի ու ջանք են ներդրել՝ հայ կեանքում ամուր պահելու ազգային գիտակցութիւնը, միշտ ծաղկուն՝ մշակոյթն ու դպրութիւնը, եւ հայոց հոգիներում մշտավառ՝ մեր հոգեւոր արժէքներն ու հայրենական ասանդները: Այսօր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, քաջեռանդ նախագահութեամբ Կարա Պերճ Սեդրակեանի, աշխարհի տարբեր երկրների իր մասնաճիւղերով շարունակում

է յանելել հարիրամեայ բարեգործութեանց շղթան՝ գովարժան նպաստ ու ներդրում բերելով նաեւ մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան իրականացմանը: Միութեան գործունէութեան մէջ շարունակում են դրսևորուել Զրիստոսասէր մեր ժողովրդի հաւապը, մերձատրին օգնելու սէրը, վաղուայ օրուայ հանդէպ լաւապետութիւնը եւ հայրենասէր ոգին:

Գոհութիւն եւ փառք Աստուծոյ, որ Իր խնամքի ներքոյ առաջնորդեց եւ առաջնորդում է ընթացքը Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ առապօրէն օրինում ծառայագործութիւնը նրա անխոնջ մշակների: Այսօր համայն հայ ժողովուրդը գնահատում է Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ նրա ազգանուէր գործիչների փարիների վաստակը, հայոց ազգին մատուցած մեծագոյն ծառայութիւնները, նուիրումն ու սէրը:

Նայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան երախտատրներին եւ այս հաստատութեան բազմաշխատ գործունէութիւնը հոգացող բոլոր հայորդիներին, ովքեր կեանքի ճանապարհ՝ առաքելութիւն են համարում ծառայութիւնը Նայրենիքին ու հարազատ ժողովրդին: Մեր աղօթքներում մշտապէս Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ենք հայցում Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան աստուածահաճոյ ու ազգաշէն գործունէութեան ճանապարհներին, նոր ծրագրերին՝ ի սէր մեր ժողովրդի, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ու Նայրենիքի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրական յորդոր ենք յղում մեր Եկեղեցու հոգեւորականաց եւ եկեղեցական վարչութեանց պատուարժան անդամներին՝ ամենուր աջակից ու մասնակից լինել Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 100-ամեայ գործունէութեան արժեւորմանը, պանծալի յիշատակների ոգեկոչմանը:

Թող Բարձրեալն Աստուած հաստատուն, զօրացեալ ու ծաղկուն պահպանի Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ Իր հանապազ օրհնութեան ներքոյ՝ Միութեան բոլոր նուիրեալներին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեստն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուալ Գիրս Օրհնութեան ի 28-ն Փետրուարի

յամի Տեստն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ

ի Մայրական Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 631